է, թէ երեխայութիւնից այդտեղ է ապրել միշտ եւ ամենաչնչին փոփոխութիւն իսկ չէ գտնում կատարների տեսքի մէջ: Միւս ուղեկից–ականատեսներն եւս հաստատում են այդ: Աղէտի ժամանակ Ակոռիում գտնուած մի քուրդ եւս յետագային (Հին Բայազիտում) նոյնն է պատմել Վագներին, երբ սա Տաճկա–Հայաստան է այցելած եղել (1844 թ.), այն կողմից եւս Մասիս բարձրանալու նպատակով:

Այդ ամէնը Վագներ մանրամասնօրէն յիշատակում է մանաւանդ այն պատճառով, որ դէպքի լաւագոյն աղբիւրների՝ ականատես անհատների վկայութեամբ ապացուցանի, որ 1840–ի բնական պատահարը երկրաբանականներքին պատճառների եւ ոչ թէ Մասիսի կատարից փլած զանգուածների արդիւնք է: Եթէ վերջինս տեղի ունեցած լինէր իսկապէս, անկարելի է որ լերան մէկ կամ միւս կատարի արտաքին տեսքը որոշ փոփոխութեան ենթարկուած չլինէր:

Մասիսի ժայթքումը 1840–ին՝ Վագներ մեծապէս տարբերում է գործող հրաբուխների երեւոյթներից առհասարակ: Ներկայ դէպքում ոչ հրեղէն սիւներ են երեւացել, ոչ էլ հրահոսուն զանգուած (լաւա): Այն ամէնը, ինչ որ դուրս է ժայթքել, եղել է կարծր (հող, քար) եւ ոչ երբեք հրահոսուն վիճակում:

Վագներ հաշիւ մօտ 7000 ոտք բարձրանում է, աւելի՝ ոչ: Մինչեւ լերան կատարը բարձրանալու փորձը, ասում է ինքը, այնուամենայնիւ պիտի կատարէր, հակառակ դրժուարութիւններին եւ ձեան շատութեան, եթէ օդաչափական գործիքները կորցրած չլինէր, առանց որոնց գիտական արժէք չպիտի ունենար Արարատի կատարը բարձրանալը:

Վագներ համոզուած է, որ անգամ տարուան այդ եղենակին (մայիսի վերջ) անկարելի չպիտի լինէր բարձրանալը, եթէ միայն մարդ երկու ցուրտ գիշերներ ձիւների վրայ անց կացնելու վախը չունենայ: Մեր ճամբորդը իր կողմից ըստ ամենայնի լրիւ ու ճշգրիտ է համարում Պարրոտի հաղորդած տեղեկութիւնները: Եւ նա միանգամայն վրդովւում է, թէ ինչպէս ոմանք, նախանձից դրդուած, կասկածի տակ են դնում այն փաստը, թէ Պարրոտն է եղել այդ «ճշմարտասէր ու վստակարժան գիտնականը», առաջին անգամ Արարատի գագաթը բարձրացողը, եւ որ՝ նա լիովին արժանի է այդ փառքին:

Արարատի ամենացած սառնարանները, ըստ Վագների, սկսւում են 9–10 հազար ոտք բարձրութեան վրայ: Ինչպէս լերան կենդանական աշխարհը, այնպէս նաեւ բուսականութիւնը աղքատ է: Անտառների պակասը բացատրում է ոչ թէ կլիմայով ու հողով, այլ՝ պատմական պայմաններով:

Արարատի լանջից իջնելով՝ Վագներ յուլիսի սկզբին (1844) բարձրանում է Արագածի գագաթը: Բայց նախ քան այդ, մի քանի խօսք էլ այն մասին, թէ գերման հեղինակը ի՛նչ է ասում իր մի երկրորդ փորձի մասին՝ այս անգամ Մասիս բարձրանալու Հին Բայազէտի կողմից:

Բանն այն է, որ Վագներ Ռուսահայաստան այցելելուց մի տարի յետոյ, 1844–ի ամառը, Բերլինի Գիտութեանց Կաճառի նպաստով ձեռնարկում է մի ճամբորդութեան դէպի Տաճկա–Հայաստան, Արարատը հարաւային՝ մինչ այն դեռ բոլորովին անծանօթ՝ կողմից ուսումնասիրելու համար:

* * *

Յունիս 17–ին (1844) նա Էրզրումից Բայազէտ է մեկնում առեւտրական մի քարվանի հետ:

Շատ ցաւել պէտք է, որ Վագներ գրեթէ ոչ մի տեղեկութիւն չէ հաղորդում երկրի ազգաբանակութեան եւ նրա կենցաղի մասին: Ըստ երեւոյթին նա բոլորովին տարուած է եղել բնապատմական հետազննութիւններով եւ ժամանակ կամ յարմարութիւն չէ ունեցել ուրիշ խնդիրներով զբաղուելու:

Երեսուն ժամուան ճանապարհ հեռուից արդէն երեւում է Արարատը այդ կողմից, ասում է Վագներ. թէ՝ լերան տեսքը այդ կողմից շատ աւելի հոյակապ է քան Երեւանի կողմից, քան՝ մինչեւ իսկ Ս. Յակոբի մօտից: Թոփրաք–Կալէից տեսարանը աւելի է բացւում: Նոյն այդ տեղից հարաւում երեւում է Սիփանը՝ իր արծաթափայլ գագաթով:

Ճամբորդները անցնում են Դիատինով, հասնում Բայազէտ, ուղին շարունակում մինչեւ Մասիսի լանջերը:

Վագներ ասում է, թէ երբ իրենց քարվա–